

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի № 1467-Ն  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի № 1467-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 13-ի «Հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի բնական կորուստների չափերը սահմանելու մասին» № 1467-Ն որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետով սահմանված № 11 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ կառավարության 2021 թվականի

\_\_\_\_\_ № \_\_\_\_-Ն որոշման

«Հավելված 11

ՀՀ կառավարության 2018 թվականի

## **Չ Ա Փ Ե Ր**

### **ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶՄՅԻ ՈՐՈՇՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ՆԱՎԹԱՄԹԵՐՔԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ**

#### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Նավթամթերքի բնական կորուստը բեռնափոխադրման, բեռնաթափման, բեռնաբարձման և պահպանման ժամանակ վառելիքի զանգվածի բնականոն նվազումն է որակի պահպանմամբ, ինչը ֆիզիկաքիմիական, մեխանիկական, բնակլիմայական գործոնների ազդեցության հետևանք է:
2. Սույն հավելվածի կիրառության իմաստով բնական կորուստներին չեն դասվում տնտեսավարող սուբյեկտի կողմից սահմանված պահանջների և տեխնիկական շահագործման կանոնների խախտման, բնական աղետների, տարողությունների և խողովակաշարերի մաքրման և վերանորոգման ցանկացած տեսակի աշխատանքների, վթարի, հափշտակության, ինչպես նաև ներպահեստային պոմպային մղումների հետևանքով առաջացած վառելիքի կորուստները:
3. Բնական կորուստներ չեն այն կորուստները, որոնք առաջացել են տարողությունների և խողովակաշարերի մաքրման և վերանորոգման ցանկացած տեսակի աշխատանքների հետևանքով, վթարային կորուստները, ինչպես նաև բնական աղետներից և ներպահեստային պոմպային մղումներից:
4. Բնական կորուստների հաշվարկն իրականացվում է սույն հավելվածով սահմանված չափերին համապատասխան՝ դրանք համադրելով նավթամթերքի փաստացի մնացորդային զանգվածի հետ: Այն դեպքում, երբ փաստացի մնացորդային զանգվածն ավելի մեծ է, քան սույն հավելվածով սահմանված բնական կորուստի չափերով հաշվարկված զանգվածը, հիմք է ընդունվում փաստացի մնացորդային զանգվածը: Այն դեպքում, երբ փաստացի մնացորդային զանգվածն ավելի փոքր է, քան սույն հավելվածով սահմանված բնական կորուստի չափերով հաշվարկված զանգվածը, հիմք է ընդունվում սույն հավելվածով սահմանված բնական կորուստի չափերով հաշվարկված զանգվածը:
5. Փաստացի (բնական) կորուստների չափերը ներկայացված են ըստ սեզոնայնության, տարվա երկու ժամանակահատվածի համար՝ աշուն-ձմեռ (հոկտեմբերի 1-ից մարտի 31-ը) և գարուն-ամառ (ապրիլի 1-ից

սեպտեմբերի 30-ը):

6. Այն դեպքերում, երբ տրանսպորտային գործողությունների իրականացման տեխնոլոգիային համապատասխան նավթամթերքը պետք է տաքացվի, ապա, անկախ տարվա եղանակից և սեզոնից, կիրառվում է գարուն-ամառ սեզոնի նորմը, որը բազմապատկվում է՝ կախված տաքացման ջերմաստիճանից՝

ա. 21-30 °C ջերմաստիճանի դեպքում՝ 1,5 գործակցով,

բ. 31-50°C ջերմաստիճանի դեպքում՝ 2 գործակցով,

գ. 51°C-ից ավելի ջերմաստիճանի դեպքում՝ 3 գործակցով:

դ. 11-20°C ջերմաստիճանի տաքացման դեպքում աշնան-ձմռան սեզոնի համապատասխան նորմն աշնան-ձմռան սեզոնում բազմապատկվում է 1.5 գործակցով:

7. Նավթամթերքի ըստ տեսակների դասերը ներկայացված են սույն հավելվածի N 10 աղյուսակում:

## **ՆԱՎԹԱՄԹԵՐՔԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ**

8. Նավթամթերքի տեղափոխման դեպքում բնական կորստի չափերը, ըստ տրանսպորտային միջոցների (տեսակների) տեղափոխման, հաշվարկվում է ապրանքաուղեկից փաստաթղթերով տեղափոխման համար հայտարարագրված և փաստացի բարձված բեռի ընդհանուր զանգվածը բազմապատկելով N 1 աղյուսակում ներկայացված կորստի չափերով:
9. Եթե նավթամթերքը տեղափոխվում է տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով, ապա նավթամթերքի բնական կորստի հաշվարկման չափն ընդունվում է N 1 աղյուսակում ներկայացված տրանսպորտային միջոցների տեսակների համար սահմանված կորստի չափերի հանրագումարի չափով:

### **Աղյուսակ N 1**

**(կգ-ներով՝ 1 տոննա նավթամթերքի յուրաքանչյուր տեղափոխման**

**(բեռնափոխադրման) ժամանակ)**

<b>Նավթամթերքի դասը</b>	<b>Նավթամթերքի տեղափոխման ժամանակ բնական կորուստների չափերը, ըստ Ավտոմոբիլային տրանսպորտի աշուն-ձմեռ գարուն-ամառ</b>	<b>Երկաթուղային տրանսպորտի աշուն-ձմեռ</b>	<b>Ջրային տրանսպորտի գարուն-աշուն-ձմեռ</b>	<b>գլ</b>
-------------------------	--	---	--	-----------

				<b>ամառ</b>	
<b>1, 2</b>	0,141	0,168	0,30	2,30	4,
<b>3, 4</b>	0,013	0,019	0,20	1,30	2,
<b>5</b>	0,003	0,005	0,10	1,10	2,
<b>6</b>	0,015	0,015	0,10	1,70	1,

10. 1-ին և 2-րդ դասի նավթամթերքի բնական կորստի չափը տարողություններում ընդունման (բեռնաբարձման) դեպքում ներկայացված է N 2 աղյուսակում:

## Աղյուսակ N 2

(կգ-ներով՝ 1 տոննա նավթամթերքի ընդունման ժամանակ)

<b>Տարողության տեսակը</b>	<b>Նավթամթերքի դասը</b>	<b>Նավթամթերքի բնական կորստի չափերը աշուն-ձմեռ</b>	<b>Նավթամթերքի բնական կորստի չափերը գարուն-ամառ</b>
Վերգետնյա մետաղական.			
մինչև 700մ <sup>3</sup>	1	0,35	0,59
	2	0,31	0,59
տարողությամբ 700-1000մ <sup>3</sup> տարողությամբ	1	0,34	0,57
	2	0,31	0,54
1000-2000մ <sup>3</sup> և ավելի	1	0,19	0,36
	2	0,19	0,36
տարողությամբ Վերգետնյա մետաղական պոնտոններով.			
մինչև 700մ <sup>3</sup>	1	0,22	0,43
	2	0,21	0,43
տարողությամբ 700-1000մ <sup>3</sup> տարողությամբ	1	0,21	0,42
	2	0,20	0,41
1000-2000մ <sup>3</sup> և ավելի	1	0,06	0,18
	2	0,06	0,16
տարողությամբ Ստորգետնյա	1	0,15	0,28

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.** Ստորգետնյա տարողություններ են համարվում այն երկաթբետոնե և պողպատե տարողությունները, որոնք գետնի մակերևույթից 0.2 մ և ավելի խորությամբ են ծածկված:

Նավթամթերքի ընդունման ժամանակ բնական կորստի չափը սահմանված է նավթամթերքի մինչև 30°C ջերմաստիճանը: Եթե նավթամթերքի ջերմաստիճանը ընդունման պահին գերազանցում է 30°C-ը, ապա, անկախ տարվա եղանակից և սեզոնից, կիրառվում է գարուն-ամառ սեզոնի նորմը՝ մեծացնելով 1,5 անգամ (բազմապատկելով 1,5 գործակցով):

11. 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ դասի նավթամթերքի բնական կորստի չափը տարողություններում ընդունման (բեռնաբարձման) դեպքում ներկայացված է N 3 աղյուսակում:

### Աղյուսակ N 3

(կգ-ներով՝ 1 տոննա նավթամթերքի ընդունման ժամանակ)

<b>Տարողության տեսակը</b>	<b>Նավթամթերքի դասը</b>	<b>Նավթամթերքի բնական կորստի չափերը աշուն-ձմեռ</b>	<b>գարուն-ամառ</b>	
Վերգետնյա մետաղական	3	0,16	0,23	
	4	0,12	0,14	
	5	0,07	0,07	
	6	0,12	0,12	
	Ստորգետնյա	3		0,15
		4	0,07	0,08
5		0,02	0,02	
6		0,12	0,12	

12. Նավթամթերքի բնական կորստի չափը ներբազային վերամղման ժամանակ ներկայացված է N 4 աղյուսակում:

### Աղյուսակ N 4

(կգ-ներով՝ 1 տոննա նավթամթերքի)

**վերամղման ժամանակ)**

<b>Տարողության տեսակը</b>	<b>Նավթամթերքի դասը</b>	<b>Նավթամթերքի բնական կորստի աշուն-ձմեռ</b>	<b>Նավթամթերքի բնական կորստի չափերը գարուն-ամառ</b>
Վերգետնյա մետաղական տարա	1	0,12	0,22
	2	0,08	0,15
	3	0,03	0,05
	4	0,03	0,04
	5	0,01	0,01
	6	0,03	0,03
Ստորգետնյա	1	0,08	0,14
	2	0,06	0,11
մետաղական տարա	3	0,03	0,04
	4	0,02	0,03
	5	0,01	0,01
	6	0,03	0,03

13. Բնական կորստի չափը մազուբի համար՝ բաց հորային ամբարներում պահպանման, ընդունման (բեռնաբարձման) և դատարկման (բեռնաթափման) դեպքում կգ-ներով 1 տոննա մազուբի համար կազմում է 2.36 կգ:

14. Նավթամթերքի բնական կորստի չափը տարողություններից տրանսպորտային միջոցների (բացառությամբ ջրային տրանսպորտից բեռնաթափման ժամանակ) համապատասխան տարողություններ ընդունման (բեռնաբարձման) դեպքում ներկայացվում է N 5 աղյուսակում:

**Աղյուսակ N 5**

**(կգ-ներով՝ 1 տոննա նավթամթերքի բացթողման (բեռնաթափման, բեռնաբարձման) ժամանակ\*)**

<b>Տրանսպորտային միջոցի տեսակը</b>	<b>Նավթամթերքի դասը</b>	<b>Նավթամթերքի բնական կորստի աշուն-ձմեռ</b>	<b>Նավթամթերքի բնական կորստի չափերը գարուն-ամառ</b>
Երկաթուղային գլանատակառներ	1	0,14	0,22
	2	0,10	0,19
	3	0,02	0,04
	4	0,02	0,03

Տրանսպորտային միջոցի տեսակը	Նավթամթերքի դասը	Նավթամթերքի բնական աշուն-ձմեռ	Կորստի չափերը գարուն-ամառ
Ավտոոգիստեռներ	5	0,02	0,03
	6	0,05	0,05
	1	0,11	0,20
	2	0,08	0,19
	3	0,02	0,03
	4	0,02	0,03
	5	0,02	0,03
Ջրային տրանսպորտ	6	0,05	0,05
	1	0,13	0,21
	2	0,10	0,19
	3	0,02	0,04
	4	0,02	0,03
	5	0,02	0,03
	6	0,05	0,05

\*ՃԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Նավթամթերքի բնական կորուստը բացթողման (բեռնաթափման, բեռնաբարձման) ժամանակ հաշվում է բեռնառաքում իրականացնող կազմակերպությունը, եթե մատակարարված նավթամթերքի զանգվածը որոշվել է տրանսպորտային միջոցներում (ավտոմոբիլային, երկաթուղային գլանատակառններում և ջրային տրանսպորտում) առկա ծավալով:

2. Նավթամթերքի բնական կորուստը հաշվում է ստացողը, եթե մատակարարված նավթամթերքի զանգվածը որոշվել է ըստ մատակարար կազմակերպության ռեզերվուարների կամ հաշվիչների:

15. Նավթամթերքի բնական կորստի չափը ծովային լցանավերից (տանկերներից) տարողություններ բեռնաթափման ժամանակ ներկայացվում է N 6 աղյուսակում:

#### Աղյուսակ N 6

(կգ-ներով՝ 1 տոննա նավթամթերքի բացթողման ժամանակ)

Տարողության տեսակը	Նավթամթերքի դասը	Նավթամթերքի բնական կորստի չափերը աշուն-ձմեռ	Կորուստի չափերը գարուն-ամառ
Մետաղական	1,2	0,26	0,45

Տարողության տեսակը	Նավթամթերքի դասը	Նավթամթերքի բնական կորստի աշուն-ձմեռ	Զափերը գարուն-ամառ
	3,4	0,06	0,06
	5	0,02	0,02
	6	2,27	2,01
Ստորգետնյա	1,2	0,17	0,33
	3,4	0,04	0,05
	5	0,01	0,01
	6	2,19	1,94
Մետաղական պոմպերով	1,2	0,08	0,16
	6	0,84	0,74
Մետաղական լողացող տանիքով	1,2	0,08	0,16
	6	0,68	0,60

### III. ՆԱՎԹԱՄԹԵՐՔԻ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԱՀՊԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԶԱՓԵՐԸ

16. 16. Նավթամթերքի տարողություններում պահպանման դեպքում բնական կորստի չափը հաշվարկվում է փաստաթղթերով ձևակերպված պահուստավորման ընդունված ու տարողություններում պահվող նավթամթերքի միջին ամսական փաստացի զանգվածը բազմապատկելով N 7 և N 8 աղյուսակներում ներկայացված կորստի չափերով:
17. 17. Պահվող նավթամթերքի միջին ամսական փաստացի զանգվածը հաշվարկվում է որպես ամսվա ընթացքում յուրաքանչյուր օրացուցային օրվա ավարտին տարողություններում պահվող նավթամթերքի զանգվածների միջին թվաբանական մեծություն:
18. 18. Կորստի չափերը սահմանվում են՝ ելնելով նավթամթերքի դասից, հաշվի առնելով նաև բեռնաբարձման և բեռնաթափման հետևանքով նավթամթերքի բնական կորուստների առաջացումը:
19. 19. 1-ին և 2-րդ դասի նավթամթերքի բնական կորստի չափը տարողություններում պահման մինչև 1 ամիս պահպանման ժամանակ ներկայացվում է N 7 աղյուսակում:

**Աղյուսակ N 7**

**(կգ-ներով՝ 1 տոննա պահվող նավթամթերքի քանակի համար)**

**Տարողության            Նավթա-            Բնական կորստի չափը**

տեսակը	մթերքի դասը	Տարողությունների ծավալը (մ <sup>3</sup> )				
		մինչև 700 (մ <sup>3</sup> )		700-1000 (մ <sup>3</sup> )		1000-2000 և ավելի
		աշուն-ձմեռ	գարուն-ամառ	աշուն-ձմեռ	գարուն-ամառ	աշուն-ձմեռ
Վերգետնյա	1	0,50	1,49	0,39	1,34	0,16
մետաղական	2	0,48	1,22	0,32	0,91	0,16
Վերգետնյա	1	0,08	0,37	0,07	0,33	0,05
մետաղական	2	0,08	0,33	0,07	0,29	0,05
պոնտոններով						
Ստորգետնյա	1	0,06	0,25	0,06	0,25	0,06
	2	-	0,05	-	0,05	-

20. 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ դասի նավթամթերքի բնական կորստի չափը տարողություններում պահման մինչև 1 ամիս պահպանման ժամանակ ներկայացվում է N 8 աղյուսակում:

#### Աղյուսակ N 8

(կգ-ներով՝ 1 տոննա պահվող նավթամթերքի քանակի համար)

Տարողության տեսակը	Նավթամթերքի դասը	Բնական կորստի չափը աշուն-ձմեռ	գարուն-ամառ
Վերգետնյա մետաղական	3	0,09	0,12
	4	0,07	0,08
	5	0,05	0,07
	6	0,12	0,12
Ստորգետնյա	3	0,04	0,08
	4	0,04	0,04
	5	0,01	0,01
	6	0,12	0,12

21. Նավթամթերքի բնական կորստի չափը տարողություններում 1 ամիս և ավելի պահման պահպանման ժամանակ ներկայացվում է N 9 աղյուսակում:

#### Աղյուսակ N 9

**(կգ-ներով՝ 1 տոննա պահվող Նավթամթերքի քանակի համար, ամսական հաշվարկով)**

Տարողության տեսակը	Նավթամթերքի դասը	Բնական կորստի չափը					
		Մինչև 700 (մ <sup>3</sup> )		700-1000 (մ <sup>3</sup> )		1000-2000 (մ <sup>3</sup> )	
		աշուն-ձմեռ	գարուն-ամառ	աշուն-ձմեռ	գարուն-ամառ	աշուն-ձմեռ	գարուն-ամառ
<b>Վերգետնյա մետաղական</b>	1	0,29	0,86	0,28	0,82	0,14	0,5
	2	0,18	0,63	0,17	0,61	0,09	0,4
	3	0,01	0,10	0,01	0,10	0,01	0,0
	4	0,01	0,05	0,01	0,05	0,01	0,0
<b>Վերգետնյա մետաղական պոլետիլենով</b>	1	0,05	0,20	0,05	0,20	0,05	0,2
	2	0,05	0,14	0,05	0,14	0,05	0,1
<b>Ստորգետնյա</b>	1	0,10	0,10	0,10	0,10	0,10	0,1
	2	0,05	0,10	0,05	0,10	0,05	0,1
	3	0,01	0,05	0,01	0,05	0,01	0,0
	4	0,01	0,03	0,01	0,03	0,01	0,0

**Աղյուսակ N 10**

**Նավթամթերքի դասը**

1

**Նավթամթերքի տեսակները**

Ավտոմոբիլային բենզիններ բոլոր տեսակի

Ուղղակի թորված բենզին.

Գազի կայուն կոնդենսատ.

Բենզին գազային կայուն (գազային կոնդենսատից).

2

Նավթային լուծիչներ բոլոր տեսակի +100<sup>0</sup> C եռման ջերմաստիճանով

Ավիացիոն բենզիններ բոլոր տեսակի

Տեխնիկական իզոկտան

Նորմալ հեպտան

Նավթային բենզոլ

Օգտագործված նավթամթերքներ

3

Ռեակտիվ շարժիչների վառելիք T-2  
Նավթային լուծիչներ բոլոր տեսակի  
 $+100^{\circ}\text{C}$ -ից բարձր եռման ջերմաստ

Ռեակտիվ շարժիչների վառելիք  $+150^{\circ}\text{C}$   
 $+150^{\circ}\text{C}$  եռման ջերմաստիճանով, բ  
T-2

Նավթային սուլվենտ

Տեխնիկական կերոսին

Լիգրոյին

Նավթային քսիլոլ

Նավթային տուլոլ

4

Էթիլբենզոլ՝ տեխնիկական  
Կեռոսին լուսավորման համար բոլոր

Դիզելային և նավային վառելիքներ  
պղտորման (սառեցման) կամ զտման  
ջերմաստիճանով

Ռեակտիվ շարժիչներ վառելիք,  $+150^{\circ}\text{C}$   
եռման ջերմաստիճանով

5

Իզոպրոպիլբենզոլ տեխնիկական  
Դիզելային և նավային վառելիքներ  
պղտորման (սառեցման) կամ զտման  
ջերմաստիճանով

Վառարանային վառելիք՝ կենցաղային

6

Միջին և ցածր պտույտով դիզելային  
վառելիք

Բոլոր տեսակի մազուկներ

Քսայուղեր բոլոր տեսակի

Այլ հեղուկ նավթամթերքներ, որոնք  
տաքացում

Օգտագործված նավթամթերքներ բոլոր  
CHO մակնիշի

»

